

**«ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՐՋ**

Ա. Գ. ՂԵՎՈՆԴՅԱՆ

Արդի գլոբալացման գործընթացները փոխել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված աշխարհառազմավարական հավասարակշռության տրամաբանությունը, որը մի քանի տասնամյակ ապահովում էր միջազգային հանրության հարաբերականորեն կայուն համագոյակցությունը: Սառըպատերազմյան իրողություններին փոխարինելու եկան մի կողմից՝ «միաբևեռ»՝ աշխարհակարգի հաստատման ԱՄՆ աշխարհաքաղաքական ռազմավարությունը՝ ուղղված Եվրասիան՝ որպես «շախմատային» գլոբալ ռազմավարական մրցակցության նոր դաշտ դիտարկելուն¹, մյուս կողմից՝ Ռուսաստանի Դաշնության, Չինաստանի, Եվրոպական Միության՝ «Ֆրանսիա-Գերմանիա» տանդեմի ջանքերը՝ ուղղված բազմաբևեռ աշխարհի գաղափարի գործնական իրացմանը, որը, սակայն, ի վերջո պարտություն կրեց:

Արդյունքում փոփոխություն կրեցին նաև ազգային շահի՝ նախկինում գերակա հայեցակարգային մոտեցումները:

Ազգային շահը՝ որպես քաղաքագիտության հիմնարար կատեգորիա, դեռ անտիկ ժամանակաշրջանում գտնվում էր մտածողների ուշադրության կենտրոնում: Սակայն այն տեսականորեն հիմնավոր և գործնականում կիրառելի ձևակերպում ստացավ միայն ամերիկյան քաղաքական ռեալիզմի դպրոցի ներկայացուցիչներ Է. Ջաոնի, Հ. Մորգենթաուի, Է. Ուոլֆերսի, Կ. Թոմսոնի, Ջ. Եվարցենբերգերի, Ս. Հոֆմանի, Ռ. Նիքուրի, իսկ հետագայում՝ Հ. Քիսինջերի, Չ. Բեթզինսկու և ժամանակակից «նեոռեալիզմի» հիմնադիր Ջ. Ուոլթերի աշխատություններում՝ միայն, որոնց տեսական եզրահանգումներն իրենց մեջ ներառում էին Թուկիդիդեսի, Ն. Մաքիավելու, Թ. Հոբսի, Դ. Հյումի գաղափարական մոտեցումները: Հետագայում՝ հատկապես երկրորդ աշխարհամարտից հետո, երբ միջազգային

¹ Ամերիկյան քաղաքագետները սովորաբար կիրառում են «միաբևեռ» (unipolarity) և «քաղաքական բևեռներ» (multipolarity) հասկացությունները: Նրանց մեծամասնությունը չի նույնացնում «բևեռ» (pole) և «ուժային կենտրոն» (world/great power - համաշխարհային ուժային կենտրոն, regional power - տարածաշրջանային ուժային կենտրոն) հասկացությունները, այլ միջազգային հարաբերությունների համակարգում «բևեռ» հասկացությանը տալիս է կազմակերպչական և բովանդակային առավել քարձր մակարդակ:

² Սրա մեջ մտնում են ԱՄՆ-ի «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագիրը, NATO-ի «Գործընկերություն համուն խաղաղության» ծրագիրը, NATO-ի շրջանակներում, տարբեր պետությունների՝ այդ թվում նաև հետխորհրդային որոշ հանրապետությունների հետ գործարկվող «Անհատական համագործակցություն» ծրագրերը և այլն:

³ «ԱՄՆ-ի համար աշխարհաքաղաքական հիմնական նպատակը Եվրասիան է... Այսօր Եվրասիայում ղեկավար դիրքեր զբաղեցնում են ոչ եվրասիական գերտերությունները, և ԱՄՆ-ի համաշխարհային առաջնորդությունը անմիջականորեն կախված է նրանից, թե որքան երկար և արդյունավետ կպահպանվի նրա գերիշխանությունը Եվրասիա մայրցամաքում» (տե՛ս **З. Бжезинский, Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы**, М., 1999, էջ 43):

⁴ Ավելի մանրամասն տե՛ս **H. J. Morgenthau, Politics Among Nations**, NY, 1949, **H. J. Morgenthau, In Defense of National Interest**, NY, 1951, **E. Carr, The Twenty Year's Crisis 1919-39. An Introduction to the Study of International Realism**, NY, 1939, **J. Donnelly, Realism and International Relations**, C.U., 2000:

հանրությունը «համտեսեց» երկբևեռ աշխարհի սառըպատերազմյան քաղաքականությունը, քաղաքական ռեալիզմի եզրահանգումները նոր որակ և բովանդակություն ստացան:

Որպես քաղաքագիտության առանցքային հասկացություն՝ «ազգային շահը» «քաղաքացիության իրավունք» ստացավ միայն 1935թ., երբ ներառվեց սոցիալական գիտությունների հանրագիտարան: Նրա ձևակերպման առաջնահերթությունը պատկանում է ամերիկյան աստվածաբան Ռ.Նիբուրին և պատմաբան Չ. Բիրդին:

XX դարի 30-ականներից քաղաքական ռեալիզմի ամերիկյան դպրոցը սկսեց միջազգային հարաբերությունների համակարգի օրինաչափությունների վերհանման համակարգային ուսումնասիրություններ իրականացնել: Ռեալիզմի դպրոցի ներկայացուցիչները գտնում էին, որ միջպետական փոխհարաբերությունների հիմնական սուբյեկտները ազգ-պետություններն են, իսկ շարժիչ ուժը՝ միջպետական մրցակցությունը: Ըստ նրանց՝ ազգ-պետություններն արտաքին միջավայրում սեփական ազդեցության առավելագույնս մեծացման նպատակով անընդհատ մրցում են միմյանց հետ՝ միջպետական մրցակցության լավագույն վիճակ համարելով միջազգային/տարածաշրջանային ուժային հավասարակշռությունը: Այն խոչընդոտում է ազգային և/կամ դաշնակցային աշխարհաքաղաքական այնպիսի հզորության կուտակմանը, որն իր ծավալով գերակայում է հարևան պետությունների և նրանց դաշինքների հավաքական հզորության նկատմամբ՝ դրան հասնելով «ուժերի հավասարակշռության» քաղաքականության միջոցով³: Պատմականորեն ուժերի հավասարակշռության լավագույն օրինակ է Մեծ Բրիտանիայի «հավասարակշռության» միջնադարյան քաղաքականությունը՝ ուղղված մայրցամաքային Եվրոպայում քաղաքական հավասարակշռության հաստատմանը:

Ըստ քաղաքական ռեալիզմի տեսաբանների՝ քաղաքականությունը ենթակա է մարդու հասարակական-քաղաքական էությունից բխող օբյեկտիվ օրենքների: Մարդու ընկալման արիստոտելյան մոտեցումը, համաձայն որի «մարդը հասարակական-քաղաքական կենդանի է», ռեալիստները, փաստորեն, դիտում էին որպես հետազոտման իրենց մեթոդաբանության առանցքային հիմքերից մեկը, հետևաբար, ըստ նրանց, հանրային փոխհարաբերությունները բարեփոխելու և կատարելագործելու համար նախ անհրաժեշտ է ընկալել մարդու գործունեության հիմքում ընկած հիմնարար այդ օրենքները: Այս առթիվ դեռ ԱՄՆ առաջին նախագահ Ջ. Վաշինգտոնը կարծում էր, որ «Իրական կյանքը փաստում է՝ մարդկանց մեծամասնությունը առաջնորդվում է միմիայն սեփական շահերով: Հանրային բարոյականության մոտիվները երբեմն կարող են դրդել մարդկանց չնդատածված գործողությունների, որոնք դեմ են իրենց շահերին, սակայն նրանք ի վիճակի չեն ստիպել մարդկանց պահպանելու հասարակության մեջ առկա իրենց պարտավորությունները: Շատ քչերը կարող են երկար ժամանակ գոհաբերել սեփական շահերը հանրային բարիքի համար: Այս առումով չի կարելի մեղավոր համարել մարդու բնույթը, քանզի բոլոր ժամանակներում մարդիկ առաջնորդվել են առաջին հերթին սեփական շահերով, և եթե ցանկանում ենք փոփոխել դա, ապա սկզբում անհրաժեշտ է փոխել մարդու բնույթը: Ոչ մի հասարակություն չի կարող լինել ամուր և բարգավաճ, եթե հաշվի չառնվի այդ փաստը»⁴:

Ըմբռնելով քաղաքականության օբյեկտիվ օրինաչափություններն ու օրենքները՝ քաղաքական ռեալիզմի կողմնակիցները կարևորում են այնպիսի տեսության ստեղծման անհրաժեշտությունը, որն ի վիճակի է վեր հանելու և մեկնաբանելու (թեկուզ և ոչ ամբողջությամբ) քաղաքական գործունեության օրենքներն ու դրանց հիմքում ընկած օբյեկտիվ դրդապատճառները: Ըստ ռեալիստների՝ քաղաքականության մեկնաբանման տեսությունը պետք է հիմնվի իրական փաստերի, քաղաքական օրինաչափությունների և քաղաքականության սուբյեկտների օբյեկտիվ դրդապատճառների ուսումնասիրման վրա: Նրանց կարծիքով իրենց տեսությունը նպատակ չի հետապնդում «բացարձակ

³ Sh'u "Антология мировой политической мысли" в 5 томах, т. 2, М., 2001, էջ 594-596:

⁴ Sh'u <http://www.auditorium.ru/aud/p/index.php?a=preaddir&c=getForm&r=resDesc&id=res=155>:

ճշմարիտ» հայեցակարգ մշակել, այլ խնդիր ունի միայն ձևակերպել հայեցակարգային այնպիսի մեխանիզմներ, որոնք ի վիճակի կլինեն մեկնաբանել քաղաքական գործընթացների պատճառական հիմնարար կապերն ու դրդապատճառները: Դա է պատճառը, որ «բացարձակ ճշմարիտ» տեսություն կառուցելու հավակնություն չունենալով՝ հետազոտության մշակման մոտեցման կողմնակից տեսաբանները իրենց տեսությունը կոչում են «տեսլիստական», քանզի խնդիր ունեն ուսումնասիրել առարկաների «իրական» վիճակը, homo politicus-ի օբյեկտիվ բնույթը, այլ ոչ թե հիմնվել հայեցակարգային սուբյեկտիվ դատողությունների, պատմական մախաղեսյերի և վերացական սկզբունքների վրա: Այս պարագայում ռեալիստները մշում են, որ առկա քաղաքական միջավայրի վերլուծությունը բավարար չէ ըմբռնելու քաղաքականության (և հատկապես արտաքին քաղաքականության) բնույթը՝ նրա հետևանքները մեկնաբանելու և կանխորոշելու համար, հետևաբար անհրաժեշտ է ձևակերպել տեսական մի այնպիսի տիպոլոգիակ-հայեցակարգ, որը կկարողանա մեկնաբանել քաղաքականության ունիվերսալ հիմքերը՝ բացահայտելով քաղաքականության պատճառականությունը¹: Նրանք գտնում են, որ քաղաքականության տեսությունը, լինի դա ներքին թե արտաքին, կենտրոնական հայեցակարգի անհրաժեշտություն ունի, որը կպայմանավորի նրա բնույթը, դրսևորման ձևերն ու քաղաքական հետազոտությունը: Հենց նմանատիպ դեր ու մշանակություն ռեալիզմի տեսաբանները տալիս են «ազգային շահ» հասկացությանը:

Ազգային շահը դիտարկելով որպես քաղաքականության մեկնաբանման կարևորագույն հիմք՝ ռեալիստները այն սահմանում էին «ուժ» և «խշխանություն» հասկացություններով: Սա ենթադրում է, որ ազգ-պետությունների՝ որպես միջազգային հարաբերությունների առանցքային սուբյեկտների ազգային շահերի իրականացման և սպասարկման աստիճանը որոշվում է այդ շահերի սուբյեկտ հանդիսացող ազգ-պետությունների հավաքական «ուժով» և ռեսուրսային հզորությամբ: Ըստ ռեալիստ տեսաբանների՝ «ուժ» և «խշխանություն» հասկացություններով սահմանվող շահը օբյեկտիվ կատեգորիա է, որը կարող է ենթարկվել ձևային, բայց ոչ բովանդակային փոփոխությունների:

Բովանդակային տեսանկյունից ռեալիստները «ազգային շահ» հասկացության մեջ տարբերակում էին 3 հիմնական բաղադրամասեր՝ «կենսական կարևորության» շահեր, «կարևոր» շահեր և «միջին կարևորության» շահեր: Կենսական կարևորության շահերը ազգային անվտանգության շահերն են, որոնց իրականացման և սպասարկման հարցում պետությունը չպետք է զիջումների գնա: Կենսական շահերը իրենց մեջ ներառում են պետության կենսագործունեության այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են պետության տարածքային ամբողջականության, ազգաբնակչության, պետական իշխանության մարմինների, ռազմավարական մշանակության տնտեսական հզորությունների անվտանգության, սահմանների անխախտելիության ասպահովման առանցքային մպատակները:

Բովանդակային կառուցակազմի հաջորդ բաղադրատարրը կարևոր շահերն են, որ հիմնականում ներառում են պետական զարգացման քաղաքականության առանձին ոլորտներին վերաբերող, ենթակառուցվածքային դաշտին և տարածաշրջանային տնտեսական և/կամ այլ բնույթի ծրագրերին պետական մասնակցության շահերը: Այս շահերի սպասարկման անմիջական դաշտը իր մեջ չի ներառում պետական անվտանգությանն առնչվող հիմնախնդիրների լուծում, սակայն տևական ժամանակ կարևոր շահերի անտեսումը կարող է սպառնալ ազգային անվտանգությանը:

Ազգային շահի հաջորդ բաղադրատարրը միջին կարևորության շահերն են, որ առնչվում են պետական կառավարման ներուլորտային հիմնախնդիրներին, հանրային կենսագործունեության «երկլորդական» խնդիրների լուծմանը: Ռեալիստները կարծում են, որ միջին կարևորության շահերը այլ երկրների հետ բանակցություններում կարող են առևտրի առարկա դառնալ, քանզի չեն վերաբերում պետության ազգային անվտանգության դաշտին:

¹ Տե՛ս "Категории политической науки", МГИМО, М., 2002, էջ 548-549:

Համաձայն ռեալիստական տեսության՝ «շահ» հասկացությունը բացահայտում է քաղաքականության էությունը և կախված չէ ժամանակի ու տարածության կոնկրետ պայմաններից, մինչդեռ «ազգային շահը» առկա է նրա սուբյեկտ համոզմանը պետության քաղաքական գործունեության պարագայում միայն: Այս համատեքստում տեղին է հիշել մ.թ.ա. V դարի անտիկ հույն մտածող Թուկիդիդեսի այն միտքը, թե «շահերի ընդհանրությունը միակ ամուր կապող օղակն է ինչպես անհատների, այնպես էլ պետությունների միջև»⁸: XIX դարում Թուկիդիդեսի մոտեցումը իր վերածակերպումը ստացավ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Սոլսբերիի կողմից, որը նշում էր. «Պետությունները միմյանց կապող միակ ամուր օղակը շահերի միջև հակամարտության բացակայությունն է»⁹:

Չնայած շահերի և հատկապես «ազգային շահերի» առանձնակի կարևորության անհերքելիությանը, հարկավոր է նշել, որ մինչ օրս գիտական գրականության մեջ համաձայնություն չկա ոչ միայն ազգային շահի մեկնաբանման մոտեցումների, այլ նաև հասկացության գոյության փաստի վերաբերյալ անգամ: Օրինակ, Ջ. Քեմանը, Ջ.Ռոզենաուն¹⁰, Բ.Կապուստինը¹¹ մերժում են ազգային շահի առանցքային նշանակությունը՝ կապված նրա անորոշ բովանդակության հետ, որը, ըստ նրանց, պայմաններ է ստեղծում հանրային կարծիքի ձևախեղման, նեոգափոխման համար: Բ.Գ. Կապուստինը այս առթիվ նշում է, որ «Ազգային շահ հասկացությունը օգտակար չէ ժողովրդավարական զարգացման համար: Ժողովրդավարությունը հիմնված է այն մոտեցման վրա, որ ժամանակակից հասարակությունը պլյուրալիստական բնույթ ունի, և միայն մասնավոր շահերի փոխգործակցության միջոցով կարելի է ձևավորել պատկերացումներ ընդհանուր շահի վերաբերյալ: Ազգային շահի մասին նման պատկերացումները պատմական են, քանի որ փոփոխական են հենց իրենք՝ շահերը, ինչպիսի ավանդույթներ էլ որ ազդեն նրանց ձևավորման վրա»¹²:

Ալեհայտ է, որ «շահը» քաղաքականության հասկացություն է և արտացոլում է նրա սուբյեկտի օբյեկտիվ պահանջումներն զիտակցումը: Պահանջումները սուբյեկտի գոյության և զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունից բխող պայմանների և գործունեների ամբողջությունն են: Քաղաքականությունը սկսվում է այն ժամանակ, երբ շահը տրանսֆորմացվում է վերածվում է նպատակի: Ընդհանրությունը շահի և նպատակի միջև այն է, երբ և՛ առաջինը, և՛ երկրորդը արտացոլում են հասարակության օբյեկտիվ պահանջումները, իսկ տարբերությունները՝ որ առաջինը զիտակցվում է, իսկ երկրորդը՝ ենթադրում սուբյեկտիվ գործունեությունն հասարակության ինստիտուցիոնալ մեխանիզմների միջև: Շահերը առկա են միայն այնտեղ, որտեղ կան նպատակային սկզբունքով գործող սուբյեկտներ, որոնց գործունեությունն առանցքային կարևորություն է ստանում, երբ կրում է քաղաքական բնույթ: Դա հատկապես վերաբերում է պետության՝ որպես քաղաքականության առանցքային սուբյեկտի գործունեությանը և այդ գործունեության մեջ ազգային շահի կարևոր դերակատարմանը:

Մեկնաբանելով «ազգային շահ» հասկացությունը՝ քաղաքական ռեալիստները շեշտադրում էին հատկապես նրա արտաքին քաղաքական բովանդակությունը¹³՝ նշելով, որ

⁸ Sb'u H. J. Morgenthau, *Politics Among Nations*, էջ 92-93:

⁹ Sb'u նույն տեղը, էջ 92-93:

¹⁰ Ջ. Ռոզենաուն նշում է. «Ազգային շահի սահմանումը/որոշումը երբեք չի կարող լինել ոչ այլ ինչ, եթե ոչ մտահանգումներ, որոնք բխում են քաղաքականության վերլուծական և արժեքային հիմքից» (տե՛ս ՝ ж-л "Полис", 1995, №1, էջ 46):

¹¹ Բ. Գ. Կապուստինը «ավելի հեռում է գնում»՝ նշելով. «Ազգային շահի հայեցակարգը հնարավորություն է տալիս այն նույնացնել «պետական շահ» հասկացության հետ, որն էլ պետական իշխանության մի շարք ներկայացուցիչներին պարբերաբար հնարավորություն է ընձեռում, սեփական քաղաքական նպատակներից ելնելով, շահարկել «ազգային շահ» հասկացությունը» (տե՛ս Բ. Գ. Калустин, "Национальный интерес", как консервативная утопия, ж-л "Свободная мысль", 1996, № 3, էջ 14-15):

¹² Sb'u նույն տեղը, էջ 12:

¹³ Sb'u H. J. Morgenthau, նշվ.աշխ., էջ 31:

այն անհրաժեշտ է դիտարկել պատմական համատեքստում միայն, քանզի պատմաքաղաքական իրական զարգացումներից նրա կտրվածությունը դատապարտում է շահի իրականացումը: Քաղաքական ռեալիզմի խոշորագույն տեսաբաններից մեկը՝ Հանս Մորգենթաուն, այս առթիվ նշում էր. «Արտաքին քաղաքականության նպատակները պետք է որոշվեն բացառապես ազգային շահի համատեքստում և աջակցություն ստանան համապատասխան ուժից»¹⁴: Ջարգացնելով Հ. Մորգենթաուի մոտեցումները՝ ռեալիստական դպրոցի ներկայացուցիչները արձանագրում են, որ պետության արտաքին քաղաքական ռազմավարությունը պետք է ուղղված լինի սեփական ազգային շահերի առավելագույն սպասարկմանն ու «հորսյան» երեք նպատակների իրականացմանը, որոնք են.

- պետության անվտանգության ապահովում,
- ազգաբնակչության՝ քաղաքականապես կարևոր շերտերի տնտեսական պահանջ-մունքների բավարարում,
- միջազգային ոլորտում պետության վարկանիշի բարձրացում:

Միաժամանակ ռեալիստները գտնում են, որ պատմական կոնկրետ ժամանակահատվածում քաղաքական գործողությունները կանխորոշող շահի տեսակը կախված է քաղաքական և մշակութային համատեքստից, որի շրջանակներում ձևավորվում է արտաքին քաղաքականությունը: Ըստ նրանց՝ քանի որ միջազգային քաղաքականությունը, ինչպես և ցանկացած քաղաքականություն, մրցակցություն է «իշխանության» և «ուժի» համար, ապա կարելի է արձանագրել, որ պետության ներքին և հատկապես արտաքին քաղաքականությունը հանգում է դրսևորման երեք տիպոլինակներից մեկին. պետությունը որդեգրում է կամ «*status quo*»-ի արտաքին քաղաքականություն՝ ուղղված սեփական հզորության պահպանմանը, կամ «նվաճողական» քաղաքականություն՝ ձգտելով ձևավորված ուժային հարաբերակցության փոփոխության միջոցով ձեռք բերել իր ներկա հզորության համեմատ գերակա հզորություն, կամ «վարկանիշի և հեղինակության» քաղաքականություն՝ սեփական հզորությունների պահպանման կամ ավելացման նպատակով դրանց ցուցադրություն կազմակերպելով: Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ, որպես պետական արդյունավետ քաղաքականության իրականացման կարևորագույն նախապայման, ռեալիստ տեսաբաններն առանձնակի կարևորում են հատկապես «ուժի» և «պետության հզորության» գործոնները:

Միջպետական փոխհարաբերություններում «ուժի» գործոնի կարևորության մասին դեռ նշում էր «Պատմություն» ութհատորյա աշխատության հեղինակ, անտիկ հույն մտածող Թուկիդիդեսը, ըստ որի՝ «հզոր երկրները գործում են այնպես, ինչպես հնարավորություն է տալիս նրանց սեփական հզորությունը, իսկ «թույլերը» ընդունում են այն, ինչ իրենք պետք է ընդունեն»¹⁵: Միջպետական հարաբերությունների էությունը այս պարագայում դիտարկվում է ազդեցության և անվտանգության համար ազգ-պետությունների հարաճուն մրցակցության կոնտեքստում, որը Թ. Հոբսը անվանում էր «*bellum omnia contra omnes*» (բոլորի պատերազմ բոլոր դեմ): Այս պարագայում պետության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքը հանգում է «պետությունը չպետք է ունենա մշտական դաշնակիցներ և հակառակորդներ. այն պետք է ունենա միայն մշտական շահեր» միջնադարյան եվրոպական քաղաքականության հիմնարար մոտեցմանը, որի արդյունքում միջազգային քաղաքական հարաբերման ասպարեզը նմանվեց տարաշափ և բազմաձև քաղաքական ակտորների փոխհարաբերման ոլորտի: Միայն 1648 թ. Վեստֆալյան հաշտության համաձայագրի կնքումից հետո¹⁶, երբ միջազգային հարաբերությունների

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 36:

¹⁵ Տե՛ս В. М. Кулагин, Мир в XXI веке: Многополюсный баланс сил или глобальный PAX DEMOKRATICA? Гипотеза "демократического мира" в контексте альтернатив мирового развития ("Полис", 2001, № 1, էջ 2):

¹⁶ Վեստֆալյան խաղաղության համաձայնագրի կնքմամբ ավարտվեց 30-ամյա պատերազմը (1618-1648): Այն իր մեջ ներառում էր խաղաղության 2 պայմանագրեր՝ Օսնաբրյուկկյան (մի կողմից՝ «Մրբագան Հռոմեական կայսրության» և նրա յաշնակիցների և մյուս կողմից՝ Եվրոպայի և

հիմնական սուբյեկտներ դարձան ինքնիշխան¹⁷ ազգ-պետությունները, «ուժի» և «շահի» հարաբեկցման միջակայքը տեղափոխվեց «raison d'etat»¹⁸ և «realpolitic»¹⁹ հասկացությունների գործարկման ռեալիստական դաշտ, որտեղ «ուժի» գործոնը վերածվեց պետության արդյունավետ քաղաքականության, այն է՝ ազգային շահերի իրացման առաջնահերթ նախապայմանի: Այսօրինակ վիճակում, երբ պետություններից յուրաքանչյուրը սեփական ազգային շահերի սպասարկման և անվտանգության ապահովման նպատակով ստիպված է հիմնվել միայն սեփական «ուժերի» վրա, որպես ազգային շահի իրականացման և անվտանգության ապահովման միակ երաշխիք հանդես է գալիս պետության հզորությունը²⁰: Որպես պետության «հզորության» ցուցանիշներ դիտվում են պետության աշխարհագրական դիրքը, բնակչության թվաքանակն ու ժողովուրդագրական կազմը, բնական ռեսուրսների առկայությունը, այդպիսով արտադրության մակարդակը, բանակի թվային և որակական կազմը, ռազմական տեխնիկայի արդիականությունը, «ազգային բնավորությունը» և «բարոյականությունը», դիվանագիտությունը: Ռեալիստները գտնում են, որ անվտանգության ապահովման անհրաժեշտությունը բացառապես պետք է պայմանավորվի պետության հզորության ցուցանիշների իրատեսական գնահատականի հիմքով կերտված արտաքին քաղաքականության առաջնահերթությամբ, որի արդյունավետության հիմնական չափանիշը պետության կողմից սեփական ազգային շահերի պաշտպանությունն է: Ըստ նրանց՝ կապը ազգային շահի և նրա հիմնական սուբյեկտի՝ պետության միջև պատմական զարգացման արդյունք է և ժամանակի ընթացքում կարող է որոշակի փոփոխություններ կրել²¹: Մրցակցային մեմբերինակ պայմաններում, համաձայն քաղաքական ռեալիզմի տեսաբանների, պետության հզորությունը այլ պետությունների ազգային շահերը վիճարկելու հնարավորության մեջ է, ընդ որում շահերի վիճարկման արդյունքում հավակնությունների ենթարկվող պետությունը կարող է անգամ գրկվել պետության կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն պայմաններից՝ դադարելով գոյություն ունենալ: Սա հաստատում է այն, որ ազգային շահերը վեր են կանգնում համակեցության կարգավորման ցանկացած նորմից, սկզբունքից, իսկ ուժը/հզորությունը վերածվում է արտաքին քաղաքական գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշի և միջոցի: Ուժի գործոնի առանցքային դերին ու նշանակությանն է անդրադառնում նաև ամերիկացի քաղաքագետ Ա. Բետլերը. «Միջազգային անվտանգության հիմնաքարը ձևորոշում են տնտեսապես հզոր և քաղաքականապես ազդեցիկ պետությունները, ինչը նրանց թույլ է տալիս մնացյալ աշխարհին

նրա դաշնակիցների միջև) և Մյունստերյան (մի կողմից՝ «Սրբազան Հռոմեական կայսրության» և նրա դաշնակիցների և մյուս կողմից՝ Ֆրանսիայի և նրա դաշնակիցների միջև): Վեստֆալյան համաձայնագիրը արձանագրեց Հաբսբուրգների՝ «համաշխարհային կայսրության» ստեղծման ծրագրի ձախողումը, որի արդյունքում միջազգային հարաբերությունների համակարգում առաջ եկավ «ազգ-պետության» գաղափարը՝ վերածվելով այդ համակարգի առանցքային և հիմնական դերակատար-սուբյեկտի:

¹⁷ Պետական ինքնիշխանության (sovereignty) գաղափարը իր ձևակերպումն է ստացել Ժան Բոդենի հայտնի՝ «Վեց գիրք պետության մասին» աշխատության մեջ:

¹⁸ Raison d'etat (ֆր.) - նշանակում է ողջամիտ և ազգային շահերի հրամայականով առաջնորդվող պետական քաղաքականություն:

¹⁹ Realpolitic - դասական ռեալիզմի ուղղություններից մեկը, որը նշում է՝ պետությունը պետք է պատրաստվի պատերազմի հանուն խաղաղության: Առավել մեղմ՝ քաղաքական գործունեության ձև, որը հիմնական ուշադրությունը դարձնում է այն քանին, ինչը իրականում կարելի է իրագործել՝ կողմնորոշվելով հակառակորդի իրական շահերի, այլ ոչ թե ղեկավարտիվ արտահայտությունների վրա՝ պատրաստ լինելով ուժ կիրառել, երբ գործունեության մյուս մեխանիզմները իրենց սպառել են: Հասկացությունը գիտական գործածության դաշտ է ներմուծել Լյուդվիգ ֆոն Ռեշաուն 1853թ. (տե՛ս "Категории политической науки", էջ 599):

²⁰ Անգլերեն «national power»:

²¹ Ավանդական քաղաքական ռեալիզմը, ըստ էության, արտաքին քաղաքական որոշումների ընդունման տեսություն էր, որ հիմնվում էր արտաքին քաղաքական որոշումների ընդունման և նրանց հետևանքների վերլուծության վրա:

փաթաթել սեփական ազգային շահերը՝ դրանք դարձնելով միջազգային շահեր: Դրան կարելի է հասնել երկու հիմնական մեխանիզմի գործարկման միջոցով. կամ սեփական ռեսուրսներով դառնալ առավել հզոր, կամ միանալ հզոր տերություններին»²²: Սակայն, հարկավոր է նշել նաև, որ ազգ-պետության կողմից սեփական ազգային շահերի սպասարկման նպատակով բխող հզորությունների կուտակումը կարող է հանգեցնել նաև միջպետական փոխհարաբերություններում լարվածության ձևավորման ու հավակնոտ քաղաքականության իրականացման՝ հանգեցնելով հարևան երկրների համապատասխան քաղաքական արձագանքին: Զարգացնելով այս մոտեցումը՝ ռեալիզմի տեսությունը փաստում է, որ ցանկացած պետության՝ տարածաշրջանային կամ համաշխարհային գերիշխանության հասնելու հավակնությունները անխուսափելիորեն հանդիպում են մյուս ծրագրերի գործարկմանը խոչընդոտող կամ հակակշռող մի շարք գործոնների, և առաջին հերթին դրանք այլ պետությունների շահերի ու անվտանգության ապահովման հիմնախնդիրներն են, որոնք անվերջամալի մրցակության և մրցավազքի պատճառ են դառնում:

Միջպետական մրցակցության այդօրինակ մրցավազքում, այնուամենայնիվ, երբեմն հավասարակշռության դադարներ են տեղի ունենում, ձևավորվում են «ուժերի հավասարակշռության համակարգեր»²³, սակայն հետագայում պետությունները (և/կամ նրանց միությունները) վերսկսում են «հզորության մրցավազքը», որի արդյունքում կորըսված հավասարակշռությունը հնարավոր է լինում վերականգնել կամ պատերազմի, կամ առավել հզոր հակակշիռ կուլիցիա ստեղծելու միջոցով: Երկրների այդօրինակ կուլիցիայի՝ զսպանակների և հակակշիռների համակարգի մեջ քաղաքական ռեալիզմի դպրոցը տեսնում է պլուրալիստական բոլոր հասարակությունների գոյատևման ունիվերսալ սկզբունքը, որտեղ ուժերի հավասարակշռությունը հասարակության արդյունավետ գործառնման և օրինաչափ զարգացման պարտադիր տարրն է: Ռեալիստները գտնում են, որ մնացորդային ուժային հավասարակշռության համակարգի ձևավորման հիմք հանդիսացող գործոնները կարելի է տարածել նաև միջազգային հարաբերությունների հարթության վրա, որի արդյունքում կայունության և խաղաղության մնացորդային պայմաններ կարող են ստեղծվել միջպետական փոխհարաբերությունների ողջ համակարգի համար: Այսինքն՝ այն, ինչ արդար է միջպետական փոխհարաբերությունների համար ընդհանրապես, արդար է այդ հարաբերությունների հիմնական մասնակից առանձին պետությունների համար նույնպես:

Ուժի գործոնի և որպես նրա արձագանք, ուժերի հավասարակշռության համակարգի ձևավորման կարևորումից զատ՝ ռեալիստները առանձնակի ուշադրություն են դարձնում հատկապես պետության «հզորության» դիվանագիտական քաղաքատարրին՝ կարևորելով ոչ միայն նրա առանձնակի նշանակությունը պետության հզորության հավաքական ներկայանակում, այլ նաև նրա դերակատարումը արդի քաղաքակրթական զարգացումների համատեքստում: Ըստ ռեալիզմի տեսաբանների՝ եթե դիվանագիտությունը «ավարտվում» է պատերազմով, ապա կարելի է փաստել, որ այն պարտություն է կրել՝

²² Տե՛ս **А. Бетлер**, Национальный интерес, ж-л "Полис", 2003, №1, էջ 28:

²³ «Ուժերի հավասարակշռություն» (անգլ. balance of power) հասկացությունը քաղաքական ռեալիզմի տեսության առանցքային հասկացություններից է, որը ներկայացնում է պետությունների միջև հավասարակշռության վիճակը: Այն կարող է դիտվել նաև որպես ազգ-պետության գործունեության արդյունք և որպես միջազգային հարաբերությունների յուրօրինակ ձև, որը պայմանավորված չէ քաղաքական գործիչների գործունեությամբ, այլ առավելապես ձևավորվել է ինքնին՝ օրյեկտիվորեն: Հայեցակարգորեն այն ծագում է Թուրիզիդեսի աշխատություններից, սակայն լայն տարածում ստացավ միայն 18-րդ դարում՝ Նապոլեոն I-ի իշխանավարումից մինչև Առաջին համաշխարհային պատերազմ ընկած ժամանակահատվածում քրիստոնական և համաեվրոպական քաղաքականության վերլուծության ժամանակ: Նշյալ դրույթը հիմնված է Հոբսի կողմից ձևակերպված «միջազգային հարաբերություններ» հասկացության վրա, որը (ըստ Թ.Հոբսի) մշտապես բնամական հարձակման սպառնալիքի է ենթակա և ստիպված է հակառակորդների ուժային պոտենցիալին համարժեք ուժային պոտենցիալ ձևավորել (տե՛ս "Категории политической науки". МГИМО. М., 2002. էջ 598):

չհասնելով իր հիմնական նպատակին՝ պետության ազգային շահերը իրականացնել խաղաղ միջոցներով²⁴: Ռեալիստական դպրոցի ներկայացուցիչները գտնում են, որ իրապես և/կամ պոտենցիալ կերպով տիրապետվող ուժին համապատասխան՝ դիվանագիտությունը պետք է նախ հստակեցնի ինչպես իր, այնպես էլ հաշվի առնի մյուս ազգ-պետությունների հիմնական նպատակներն ու շահերը, որոշի նրանց համատեղելիության աստիճանը՝ նպատակների և շահերի իրականացմանն ուղղված միջոցներ կիրառելով: Վերոնշյալ խնդիրներից որևէ մեկի հաշվի չառնելը կարող է վտանգել արտաքին քաղաքականության ողջ ռազմավարությունը՝ հանգեցնելով խաղաղության խաթարմանը²⁵: Քաղաքական ռեալիզմի փիլիսոփայության ընդգծված ողջամտությունը և հաշվեկատությունը քաղաքական գործողությունների և նրանց դրդապատճառների բարոյական հիմնավորման օրյեկտիվ անհրաժեշտություն են ստեղծում:

Ռեալիստական տեսության վերոնշյալ մտտեցումների տեսանկյունից հատկապես կարևորվում է «քաղաքականություն-բարոյականություն» կապը: Ընդհանուր առմամբ քաղաքական ռեալիզմի տեսությունը արտաքին քաղաքականությունը չի մեկնաբանում պետության ղեկավարության փիլիսոփայության և քաղաքական հայացքների ընդհանուր միտումներից: Ըստ ռեալիզմի տեսաբանների՝ արտաքին քաղաքականության էությունը ընկալելու համար անհրաժեշտ է ըմբռնել ոչ այնքան պետության քաղաքական ղեկավարության որդեգրած գաղափարական կողմնորոշումները, որքան նրանց կողմից պետության ազգային շահերի գիտակցման և դրանց իրականացման հնարավորությունների արդյունավետ գործարկման աստիճանը: Առաջարկելով ողջամիտ արտաքին քաղաքականության հայեցակարգային մոդել՝ քաղաքական ռեալիզմի կողմնակիցները հստակ գիտակցում են, որ այն գործնականում երբևէ չի կարող լիովին իրականացվել, միաժամանակ, սակայն, գտնելով, որ առաջարկվող մոդելը լավագույնն է, քանզի նվազագույնի է հասցնում արտաքին քաղաքականությանը սպառնացող հնարավոր վտանգները՝ հանգեցնելով շահերի առավելագույն բավարարմանը: Քաղաքական ռեալիզմը ընդունում է քաղաքական իդեալների և բարոյական սկզբունքների կայունությունը, սակայն նպատակ ունենալով հստակ տարանջատել ցանկային հնարավորից՝ առաջնահերթ է համարում ողջամիտ և սքափ արտաքին քաղաքականության իրականացումը՝ չհերքելով, սակայն, որ ոչ միշտ է այն ռացիոնալ, քանզի իր վրա կրում է հանրության և/կամ պետության ղեկավարության քաղաքական նախասիրությունների, պատկերացումների, անձնական որակների ու շահերի ազդեցությունը:

Քաղաքական ռեալիզմը ընդունում է քաղաքական գործողության բարոյական կարևորությունը՝ միաժամանակ արձանագրելով բարոյական առաջնայնությունների և արդյունավետ քաղաքականության կերտման պահանջների անխուսափելի անհամապատասխանությունը: Ըստ նրանց՝ արտաքին քաղաքականությունը պետք է ողջամիտ և ռացիոնալ լինի բարոյական իր սկզբունքների և գործնական նպատակների տեսանկյունից՝ միաժամանակ ընդգծելով, որ «քաղաքականությունը պետք է մեկնաբանվի քաղաքական հասկացություններով, և քաղաքականության գնահատման բարոյական նորմերի փնտրումը քաղաքական միջակայքից դուրս ողջամիտ չէ»²⁶: Պետությունը իրավունք չունի բարոյականությունը վեր դասել արդյունավետ քաղաքականության կերտման պահանջներից, որոնք ինքնին հիմնված են ազգի գոյատևման բարոյական սկզբունքի վրա: Պետական քաղաքականության կերտման համատեքստում ռեալիստ տեսաբանները առանձնահատուկ կարևորում են ողջամիտ քաղաքականության իրականացման դերն ու նշանակությունը՝ նշելով, որ այն պետք է ածանցվի «քաղաքական բարոյականության»՝ քաղաքական գործողությունների հետևանքների սքափ հաշվառման առաջնահերթ հրամայականից,

²⁴ Տե՛ս «Антология мировой политической мысли», էջ 503:

²⁵ Տե՛ս H. J. Morgenthau, *Politics Among Nations*, էջ 419:

²⁶ Տե՛ս E. Car, *The Twenty Year's Crisis 1919-39. An Introduction to the Study of International Realations*, I., 1939, էջ123:

քանզի բարոյականությունը (էթիկան) գործողությունների մասին դատում է համաձայն դրանց՝ բարոյական օրենքների համապատասխանելիությամբ, մինչդեռ քաղաքական բարոյականությունը գործողությունները գնահատում է համաձայն դրանց հետևանքների և շահերի իրացման աստիճանի:

Պետության՝ որպես քաղաքական հիմնարար ինստիտուտի զարգացման նախորդ փուլերում (մինչև XVII դար) քաղաքականությունը առավելապես ածանցվում էր «խաղ զրոյական արդյունքով» բանաձևումից²⁷: Նման մոտեցումը միջպետական հարաբերություններում փոխադարձ հակընդդեմ շահերի առկայության պարագայում, պարտվող կողմին փաստացիորեն հնարավորություն է ընձեռում համապատասխան ռեսուրսների առկայության պարագայում գնալ ունակելով՝ վիճարկելով շահի բավարարման նախորդ արդյունքները²⁸:

XX դարի վերջին քառորդում նմանօրինակ մոտեցումը համեմատաբար զիջեց իր դիրքերը առավել համաձայնողական մեխանիզմների գործարկմանը, որտեղ շեշտը չէր դրվում միայն «հաղթող» կողմի պահանջմունքների լիակատար բավարարման վրա՝ հաշվի առնելով, որ դա հետագայում կբերի շահերի սուր և շարունակական մրցակցության ու բխման:

Քաղաքական ռեալիզմի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Ջ. Շվարցենբերգերը, կարծում էր, որ «Միջազգային հարաբերություններում գործում են ոչ միայն ուժի օրենքը, այլ նաև փոխգործակցության և նույնիսկ կոորդինացման ու համաձայնեցման մոտեցումները»²⁹: Եթե դա այդպես է, ապա տրամաբանական են Հ. Ջիսինջերի, Մ. Թեթչերի և արևմտյան մի շարք այլ տեսաբանների կանխատեսումներն առ այն, որ ոչ հեռու ապագայում իրատեսական է 19-րդ դարի եվրոպական քաղաքականության հիմնական սկզբունքները հիշեցնող ուժերի հավասարակշռության համակարգի վերականգնումը: Նման համակարգը արդիական է հատկապես զլոբալիզացիոն գործընթացների ներկայիս դարաշրջանում, երբ պետությունների միջև փոխկախվածությունը և փոխազդեցությունը երկրաչափական պրոգրեսիայով մեծանում է, փոփոխվում են նաև ազգ-պետության և նրա գործունեության քաղաքական հիմքերի՝ ազգային շահերի ընկալման նախկին կոշտ մոտեցումները: Մակայն այդ բոլորը, ըստ փորձագետների, միջպետական փոխհարաբերությունների նախկին բովանդակության նոր ձև են միայն, որը հանգեցնում է «անարխիկ» համակարգում ինքնիշխան պետությունների մրցակցության³⁰: Այս պարագայում բնական վիճակ համարվում է պայքարը «միաբևեռության» դեմ՝ նպատակ ունենալով որպես կայունության հիմնական պայման պահպանել «բազմաբևեռ» ուժային հավասարակշռությունը:

²⁷ «Վաղ զրոյական արդյունքով» բանաձևն առամաբանությունը այն է, որ կողմերից մեկի շահերը բավարարվում են հակառակորդ կողմի շահերի հաշվին:

²⁸ Բանաձևը աշխի էր ընկնում միջպետական հարաբերությունների անկայունության պահպանման բարձր աստիճանով:

²⁹ Տե՛ս G. Schwarzenberger, Power Politics. A Study of World Society, Third Edition, London, 1964, էջ 223:

³⁰ Միջազգային հարաբերությունների համակարգը՝ որպես անարխիկ համակարգ, դիտարկվում է ժամանակակից քաղաքական մեթոդալիզմի կողմից: «Անարխիա» է դիտվում ոչ թե քաոսը, այլ այնպիսի վիճակ, երբ պետությունների գործողությունները լիակատար վերահսկման ենթակա չեն «միջազգային արբիտրի»՝ միջպետական փոխհարաբերությունների վրա «բացարձակ» իշխանություն և ազդեցություն ունեցող որևէ կառույցի կամ ինստիտուտների կողմից (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս K. Waltz, Theory International Politics, 1979, Reading; K. Waltz, The Men, State and War, NY, 1975; K. Waltz, Theory of International Realations, 1975, F. Greentain, N. Polsky (ds), International Politics. Handbook of Political Science, vol. 8, Reading):

А. Г. ГЕВОНДЯН - *Реалистическая трактовка категории "национальный интерес"*. - Многие мыслители древности в своих трудах искали универсальную основу, основной мотив политики и остановились на категории "интерес". Американская школа политического реализма во главе с Г. Моргентау и другими выдающимися исследователями считала, что основой "большой политики" государств является категория "национальный интерес", определенный в терминах власти. Как универсальная мотивация она остается почти без содержательных изменений на протяжении тысячелетий и детерминирует государственную политику каждой страны. Имели место лишь косметические внешние изменения, но суть политики, и особенно государственной политики, почти не изменилась. И об этом заявляют теоретики Реалистической школы.

Несмотря на это, реалисты не исключают, что развитие системы международных отношений может идти по пути средневековой Европы, то есть создания системы равновесия сил, находя в этой концепции ключ стабильного политического развития международного сообщества.